# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏՈՒՄ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանում սովետական իշխանության տարիներին գիտա-հետազոտական հաստատությունների ցանցի լայն զարգացումը, գիտական աշխատողների բարձրորակ կադրերի աճումը և նրանց արդյունավետ աշխատանքը Հայկական ՍՍՌ էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման և երկրի պաշտպանության ամրապնդման ասպարեզում, Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշեց.

1. Ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական հաստատությունների ղեկավարությունը գիտական միասնական ղեկավար կենտրոնում համախմբելու նպատակով և գիտական աշխատանքի հետագա էլ ավելի նպատակասլաց զարգացման համար, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի բազայի վրա Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևան քաղաքում կազմակերպել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա։

2. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմը որոշել 23 մարդ։

3. Սահմանել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմը նշելու և հաստատելու հետևյալ կարգը.

ա) Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմի թեկնածությունները առաջ են քաշվում գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, գիտական առանձին աշխատողների և նրանց խմբերի կողմից, այն գիտնականների թվից, որոնք գիտությունը հարստացրել են գիտական առաջնակարգ նշանակություն ունեցող և ՍՍՌ Միության սոցիալիստական շինարարությանը և նրա ռազմական հզորության ամրապնդմանը նպաստող աշխատություններով։

բ) Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների թեկնածությունների վերաբերյալ նյութերը քննվում են կառավարական հատուկ հանձնաժողովի կողմից, որն իր առաջարկությունները ներկայացնում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի քննարկմանը և հաստատությանը։

4. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների թեկնածությունների վերաբերյալ գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, առանձին գիտական աշխատողների և նրանց խմբերի կողմից ներկայացված նյութերը քննարկելու, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի քննարկմանը և հաստատությանը ներկայացնելու նպատակով Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կառուցվածքի և կանոնադրության նախագիծը

մշակելու համար, Հայկական ՍՍՌ Լուսավորության ժողովրդական կոմիսար ընկ. Ա. Ա. Խաչիկյանի նախագահությամբ կազմել կառավարական հանձնաժողով հետևյալ կազմով. ընկ. Ս. Կ. Կարապետյան, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելի, ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյան, պրոֆեսոր Հ. Խ. Բունիաթյան (Երևանի Մոլոտովի անվան Պետական Համալսարանի ռեկտոր), Հայկական ՍՍՌ Գիտությունների վաստակավոր գործիչ Վ. Օ. Գուլքանյան և գիտության վաստակավոր գործիչ պրոֆեսոր Լ. Ա. Հովհաննիսյան։

5. Հանձնարարել կառավարական հանձնաժողովին, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության ներկայացուցչի հետ համատեղ Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի քննությանը ներկայացնել գիտական հաստատությունները վերակառուցելու և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ինստիտուտների ու հաստատությունների գիտական նորմալ աշխատանքը ապահովող նյութական-տեխնիկական բազա ստեղծելու միջոցառումները։

## В СОВНАРКОМЕ АРМЯНСКОЙ ССР

*Об организации Академии наук Армянской ССР*

Учитывая широкое развитие сети научно-исследовательских учреждений в Армении за годы советской власти, рост высококвалифицированных кадров научных работников и их плодотворную работу по развитию экономики и культуры Армянской ССР и укреплению обороны страны, Совет Народных Комиссаров Армянской ССР *постановил:*

1. В целях объединения руководства научно-исследовательскими учреждениями республики в едином руководящем научном центре и в интересах дальнейшего, более целеустремленного развития научной работы, на базе Армянского филиала АН СССР организовать в столице Армении, городе Ереване, Академию наук Армянской ССР.

2. Первый состав действительных членов Академии наук Армянской ССР определить в количестве 23 человек.

3. Установить следующий порядок намечения и утверждения первого состава действительных членов Академии наук Армянской ССР:

а) кандидаты в первый состав действительных членов Академии наук Армянской ССР выдвигаются научными учреждениями, общественными организациями, отдельными научными работниками и их группами из числа ученых, обогативших науку трудами первостепенного научного значения и способствующих социалистическому строительству Союза ССР и укреплению его военной мощи;

б) материалы на кандидатов в действительные члены Академии наук Армянской ССР рассматриваются специальной правительственной комиссией, которая представляет свои предложения на рассмотрение и утверждение Совета Народных Комиссаров Армянской ССР.

4. Для рассмотрения материалов на кандидатов в действительные члены Академии наук Армянской ССР, представленных научными учреждениями, общественными организациями, отдельными научными работниками и их группами, а также разработки проекта структуры и устава Академии наук Армянской ССР для внесения на рассмотрение и утверждение Совета Народных Комиссаров Армянской ССР—образовать правительственную комиссию, под председательством народного комиссара просвещения Армянской ССР тов. *Хачикян А. А.*, в составе тов. *Карапетяна С. К.*, академика *Орбели И. А.*, академика *Манандяна А. А.*, профессора *Бунятяна Г. Х.* (ректор Ереванского Госу-

дарственного университета им. Молотова), заслуженного деятеля науки Армянской ССР *Гулканяна В. О.* и заслуженного деятеля науки профессора *Оганесова Л. А.*

5. Поручить правительственной комиссии совместно с представителем Президиума Академии наук ССР представить на рассмотрение Совета Народных Комиссаров Армянской ССР мероприятия по реорганизации научных учреждений и созданию материально-технической базы, обеспечивающей нормальную научную работу институтов и учреждений Академии наук Армянской ССР.